

Սիրելի Ծխականներ,

Հաճոյքով կը տեղեկագրեմ թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ Ձեր նիւթական ու բարոյական զոհողութեան շնորհիւ բոլորած ենք յաջող տարի մը:

Մօտաւորապէս ութը ամիս իբրեւ այցելու հովիւ պաշտօնավարելէ ետք՝ Օգոստոս ամսուան վերջաւորութեան ընտանեօք նիւ-Պրիթըն փոխադրուեցանք եւ այդ թուականէն մինչեւ հիմա կը պաշտօնավարեմ իբրեւ մնայուն հովիւ:

Մեր մէկ տարուան գործունէութեան ամփոփ տեղեկագիրը հետեւեալն է:

Կիրակի եւ տօնական օրերուն կատարած ենք եկեղեցական պաշտամունք եւ մատուցած Ս Պատարագ եւ խօսած աւուր պատշաճի քարոզ հայերէն եւ Անգլերէն լեզուներով, ի միութարութիւն մեր հաւատացեալ ժողովուրդեան:

Վերոյիշեալներու կարգին զբաղած ենք մեր պաշտօնին յատուկ գործերով, այն է, ժողովներու նախագահել, հիւանդներուն եւ սգաւորներուն այցելել, տնօրհնէք, գերեզմանօրհնէք, Լոյս Թերթիկի խմբագրում եւ այլն:

Մէկ տարուան ընթացքին ունեցած ենք 2 Մկրտութիւն, 1 Պսակ եւ 2 Թաղում:

Ապրիլ 25 ին նիւ-Եորքի Միջազգային Օղակայանին մէջ դիմաւորեցինք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Տ. Տ. Վազգէն Սրբազնագոյն Կաթողիկոսը:

Ապրիլ 28ին ի շարս այլ եկեղեցականներու ներկայ եղանք Ս Վարդան Մայր Տաճարի օծման արարողութեան նիւ-Եորքի մէջ:

Մայիս 1-2 ին նիւ-Եորքի մէջ մասնակսեցանք Հոգեւորականաց Համագումարին:

Մայիս 3-4 ին մասնակսեցանք թեմական պատգամաւորական ժողովին մեր երկու երեփոխաններուն հետ: Մայիս 26ին Քէյմպրիճի Ս Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ Վեհափառ Վազգէն Հայրապետի մատուցած Ս Պատարագի ժամանակ խորանի վրայ ծառայեցինք կարգ մը քահանայ հայրերուն հետ: Իսկ նոյն իրիկունը մեր ծխականներէն շատերուն հետ ներկայ եղանք ի պատիւ Վեհափառ Հայրապետի տրուած պատուոյ ճաշկերոյթին:

Կիրակի, Յուլիս 21ին Եիւն-եըն Սիթիի Ս Խաչ եկեղեցւոյ մէջ պատարագեցի, իսկ նոյն եկեղեցւոյ հովիւը, Տ Վրթանէս Վարդապետ Գալայճեանը պատարագեց մեր եկեղեցին: Հոկտեմբեր 6ին նիւ-Եորքի Ս Վարդան Մայր Տաճարին մէջ պատարագեցի եւ խօսեցանք աւուր պատշաճի քարոզ: Մեր սարկաւազները եւ Դպրաց Դասն ու ժողովուրդը մասնակսեցան ժամապաշտութեան: Դեկտեմբեր 9ին եկեղեցւոյս զանազան կազմակերպութիւններու Վարչական մարմիններուն հետ խառն ժողով մը ունեցանք ծուխիս բարելաւման


նկատմամբ: Այս ժողովին մէջ կարգ մը շինիչ թելադրանքներ եղան ներկաներուն
կողմէ Ս Յարութիւն եկեղեցւոյ պայծառութեան համար:

Հայերէն Դպրոցի ղասաւանդութեանց սկսանք Սեպտեմբեր 24 ին եւ մինչեւ
հիմա կը շարունակուի: Այս տարի ունեցանք 17 աշակերտներ, 4 մանչ եւ 18 աղջիկ:
Ուսուցիչներն են Տիկնայք Ռոզ Եսայեան, Ռոզ Մոզի եւ Հովիւը:

Ծրագրած ենք 1969 ընթացքին Պատուարժան Ծխական Խորհուրդին հետ համա-
գործակցաբար արշաւ մը սկսիլ նոր անդամներ արձանագրելու մեր եկեղեցիին:

Եզրափակելով խօսքս, գոհունակութեամբ կ'ըսեմ թէ մեր եկեղեցին շէն
ու պայծառ է ժողովուրդի համագործակցութեան շնորհիւ:

Տէրը օրհնէ համայնքիս ազնիւ ժողովուրդը եւ պարգեւէ մեզի երկնային
իմաստութիւն ու բարի առաջնորդութիւն որ կարենանք ծառայել իր փառքին եւ մեր
սիրելի եկեղեցիին ու ազգին:


Վարդան ՎՍՅ.Տ Ասատուրեան
Հոգեւոր հովիւ